ՔԱՂՎԱԾՔ

2011 թ-ի հուլիսի 15-ին 01.01.2011-30.06. 2011թ. կտրվածքով Դողս համայնքի համայնքապետի ազգաբնակչությանը ներկայացված հաշվետու ժողովի հաշվետվությունից

Ժողովին ներկա էին ՀՀ Արմավիրի մարզի մարզպետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Վ Աբրահամյանը, համայնքի ավագանու անդամները , գյուղապետարանի,բուժ. ամբուլատորիայի աշխատակիցները ,ինչպես նաև համայնքի թվով 48 բնակիչներ :

Ժողովի նախագահ՝ Մ.Աղամյան
քարտուղար՝ Ռ.Համբարձումյան

Դողս համայնքի ղեկավար Մեսրոպ Աղամյանը, ներկայացրեց 2011 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը եկամուտներ և ծախսեր կտրվածքով ,առաջին կիսամյակում կատարված աշխատանքները :

Մ.Աղամյանի ելույթից հետո արտահայտվեցին ավագանիներ Ա.Աղամյանը և Ա.Գրիգորյանը , համայնքի բնակիչներ Ռ.Եղիազարյանը, երկրապահ Վ.Անտոնյանը: Նրանց կողմից բարձրացվեցին համայնքում առկա մի քանի հիմնահարցեր և խնդրեցին համայնքի ղեկավարին , որպեսզի դիմի կառավարության աջակցությանը դրանց լուծման համար :

Ելույթ ունեցավ Արմավիրի մարզի մարզպետարանի Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ Վ. Աբրահամյանը և առաջարկեց էլ ավելի ուշադիր լինել գյուղատնտեսական աշխատանքների օպտիմալ կազմակերպման հարցերին, բնակչությանը հուզող սոցիալական հարցերին , երիտասարդության հայրենասիրական դաստիարակությանը:

Իր կողմից Դողս համայնքի ղեկավարի 2011թվականին առաջին կիսամյակի կատարված աշխատանքները գնահատեց բավարար:

Ժողովի նախագահ Մ.Աղամյան

Պատճենը իսկականի հետ ճիշտ է

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## Դողս համայնքի ղեկավարի 2011թ աշխատանքների

2011թ.-ի բյուջեով նախատեսված եկամուտները և ծախսերը

## Եկամուտներ

հազ. դր

| | եկամուտներ | տ/նախ. | 1-ին կիսամյակ | | կատ% | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պլան | փաստացի | 1-ին կիսամյակ | տարի |
| 1 | հողի հարկ | 6270.0 | 3030.5 | 2836.4 | 96.6 | 45.2 |
| 2 | գույքահարկ | 1390.0 | 1110.0 | 1163.3 | 104.8 | 83.7 |
| 3 | տեղ տուրք | 125.0 | 82.5 | 73.8 | 89.5 | 59.0 |
| 4<br>5 | վարձ վճարներ<br>այլ ոչ հարկ.եկ. | 950.0 | 405.0 | 208.2 | 51.4 | 21.9 |
| 6 | դոտացիա | 12692.0 | 6346.1 | 6346.1 | 100.0 | 50.0 |
| 7 | տարեսկ.մնաց. | 730.4 | 730.4 | 730.4 | 100.0 | 100.0 |
| | ընդամենը | 22157.4 | 11704.5 | 11358.2 | 97.0 | 51.3 |

## Ծախսեր

հազ. դր

| | ծախսեր | տ/նախ | 1-ին կիսամյակ | | կատ% | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | պլան | փաստացի | 1-ին կիսամյակ | տարի |
| | վարչական բյուջե | 20391.0 | 10805.0 | 9282.8 | 85.9 | 45.5 |
| 1 | տեղական ինք/.վարչ/ | 14850.9 | 7312.0 | 6194.3 | 84.7 | 41.7 |
| 2 | մշակույթ/վարչ/ | 1990.1 | 1018.0 | 843.5 | 82.8 | 42.3 |
| 3 | սոց ծրագիր | 2600.0 | 2000.0 | 1850.0 | 92.5 | 71.1 |
| 4 | սան մաքրում | 950.0 | 475.0 | 395.0 | | |
| | ֆոնդային բյուջե | 1766.4 | 730.4 | 561.0 | 76.8 | 31.7 |
| 5 | կապիտալ վերան. | 1175.4 | 139.4 | ----- | ---- | ---- |
| 6 | սարքավոր.ձեռք բ. | 561.1 | 561.0 | 561.0 | 100.0 | 100.0 |
| 7 | այլ ակտիվների ձեռք բերման ծախսեր | 30.0 | 30.0 | ------- | ---- | ----- |
| 8 | ընդամենը | 22157.4 | 11535.4 | 9843.8 | 85.3 | 44.4 |

2011 թվականին կատարվել են հետևյալ աշխատանքները

1. Կատարվել են նախատեսված աղբաթափման աշխատանքները:
2. Ձեռք է բերվել խոհանոցային կահույք նախատեսված դպրոցի տարրական դասարանների համար
3. Տրվել են դրամական օգնություն համայնքի սոցիալապես անապահով 15 բնակիչների ,1 վետերանի, որը մասնակցել են Հայրենական մեծ պատերազմին ԼՂՄՊ զոհված մասնակիցների 2 այրների, Արցախյան մարտերի 3 ազատամարտիկների ,երիտասարդների միության կենտրոնին/Արմավիրի մարզի կարկուտից տուժած համայնքներին օգնություն տրամադրելու համար /
4. Համայնքում ակտիվացել է մշակութային կյանքը, կազմակերպվել են գեղեցիկ երեկոներ նվիրված ամանորին ,կանանց միջազգային օրվան , Հայրենական պատերազմի և Շուշիի ազատագրման հաղթանակներին ,գեղեցիկ ցերեկույթ նվիրված Գ.Նժդեհի ծննդյան 125-ամյակին:
5. Գյուղապետարանը հուշանվերներ է նվիրել համայնքի ՀՄՊ միակ վետերանին և Արցախյան ազատամարտի մասնակիցներին

6.Համայնքի 3 անապահով ընտանիքների տրամադրվել է ձմեռվա վառելափայտ

7. Մշակույթի տան պատուհանները և գրոսայգու շատրվանի ջրավազանը, գրոսայգու լուսավորությունը ենթարկվել են ընթացիկ վերանորոգման

8.Մարզպետարանի կողմից տրամադրված ցինկի ֆոսֆատը բաժանվել է համայնքի բնակչությանը կրծողների դեմ պայքարի համար

9.Համայնքի բնակչությանը տրվել են 243 տեղեկանքներ և պատասխանվել է 33 դիմումի, 59 տարբեր բնույթի նամակների , անցկացվել են համայնքի ավագանու 5 նիստեր

10.Կազմակերպված կերպով կատարվում է հացահատիկի բերքահավաքը

2011թ- ին Դողս համայնքի ղեկավարի աջակցությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները:

1 Համայնքի բնակիչների ակտիվ մասնակցությամբ գյուղի գրոսայգում կատարվել է ծառատունկ :

2. Համանքի ղեկավարի միջնորդությամբ "Բարձունք 5165 " ֆրանսահայկական բարեգործական կազմակերպությունը շարունակում է ատամնաբուժական ծառայություններ մատուցել իր մոտ գրանցված համայնքի մեծ թվով բնակիչների

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Խմելու ջրի ջրագծերի կապիտալ վերանորոգում
2. Մանկապարտեզի կառուցում
3. Սպորտ դահլիճի կառուցում
4. Ճանապարհների ասֆալտապատում
5. Մշակույթի տան կապիտալ վերանորոգում

Համայնքի ղեկավար՝ Մ. Ադամյան

Աշխատ. քարտուղար Ռ.Համբարձումյան